



ՄԱՐԺԱՐԵՐԹ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն. Կ. Բ. Ա. Ղ. Ա. Գ. Ա. Կ. Ա. Ն.

36^{րդ} ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ 6 ՅՈՒՆԻՍ 1887

ԹԻԻ 3876

ՄԱՐԺԱՐԵՐԹ կը հրատարակուի ի Կ. Պոլիս, ամեն շաբաթ օր, եւ ձեռքէ կը ծախուի 40 ՓԱՐԱՑԻ: Բաժանորդագրութեան պայմանք են՝ Կ. Պոլսոյ համար տարեկան կէս եւ վեցամսեայ՝ քառորդ Օսմ. ոսկի. գաւառաց համար 70 դր. եւ օտար երկրաց համար 15 ֆրանք: Բաժանորդագրները դրկելու է առ մատակարարութիւն Սրեւելքի եւ Սահմի, Կ. Պոլիս, Ղալաթիա, Նորատունկեան խան:

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Table with 2 columns: Name (Ա. Ա.), Address (Ա. զգային), and other details like (Ա. զգ. Ժողով) and (Ա. զգ. Ժողով)

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Ա. Զ. Գ. Ժողով Ա. Յ. Ի. Ն. Պ. Յ. Ս. Ո. Ի. Ն. Ե. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Մայիս 30 ին Ազգ. Ժողովը կատարեց 87-88 ի շրջանի համար Մայր-Դիւանի ընտրութիւնը: Մէրեք-Գուլի թարութիւն էֆէնտի Ս. ատենապետութեան համար ստացաւ 7000 քուէ եւ թիրեաքեան էֆ. ինք քուէ: Սոյն քուէներն անբաւական համարուելով երկրորդ քուէարկութիւն մը եւս տեղի ունեցաւ: Այդ միջոցին թիրեաքեան էֆէնտի հրաժարելով ընտրելութեան, Մէրեք-Գուլի էֆէնտի այս անգամ ստացաւ 7000 քուէ:

Մենք այս ընտրութեան մասին օրինական դիտողութիւններ ունինք, սակայն լրացեալ գործողութեան մը հանդէպ այժմ աւելորդ կը համարինք: Հետեւաբար կ'անցնինք Մէրեք-Գուլի էֆէնտի:

Մեր խորհրդարանական կեանքի մէջ Մէրեք-Գուլի էֆէնտի կարեւոր դերը մը դրաւած է, եւ ի նկատի առնելով մեր ազգային բարեբեր, Մէրեք-Գուլի էֆ. իրաւունք ունի դո՛ւ անալու իրեն եղած այս պատուոյն: Առանց պետա-

կան անձ կամ հարուստ վաճառական լինելու Մէրեք-Գուլի էֆ. իրեն առաջ բացուած տեսած է ազգային ամենաբարձր պաշտօններու ասպարէզներն: Բնական է որ ազգային նախապաշարմանց յաղթելու համար Մէրեք-Գուլի էֆէնտի ունենալու էր յատկութիւններ, որոց չնորհիւ բարձրացաւ եւ կրնայ բարձրանալ ամէն մեծ պաշտօններու: Ի հարկէ մենք անոնցմէ ենք որ միշտ դո՛ւ անցինք Մէրեք-Գուլի էֆէնտի յաղթանակացն համար, վասն զի արտաքին փայլի մը չողուններովը չէր որ Ազգ. Ժողովը յացանձ էր:

Եւ սակայն Մայիս 30 ի նիստն ակնեւեւ ցոյց տուաւ թէ Մէրեք-Գուլի էֆէնտի այժմ իրեն հետեւողներու խիստ փոքրիկ թիւ մը ունի: Եթէ բազմաթիւն նախորդ տարիներու մէջ Մէրեք-Գուլի էֆէնտի ստացած քուէներն — կամ լաւ եւ ըսել ժողովոյ միաձայն քուէներն — Մայիս 30 ի նստի քուէներուն հետ տարբերութիւնը ըզգալի պիտի լինի:

Ի՞նչ է պատճառն այս հեռացման: Ըսինք թէ Մէրեք-Գուլի էֆէնտի արդէն արտաքին շլացուցիչ փայլ մը չունէր որպէս զի առարկուի թէ այդ փայլը կորսնցուց եւ այդ պատճառաւ իւր հետեւողներն ալ հեռացան իրմէ: Իսկ իւր յատկութիւններն միթէ ոչընչացան: Ո՛չ, մանաւանդ թէ ստացած փորձառութեան չնորհիւ նա իրաւունք ունէր սպասել աւելի շատ յարգանաց ու համակրանաց: Մեր համոզմամբ Ազգ. Ժողովոյ ամենաստուար մեծամասնութիւնը հեռացաւ Մէրեք-Գուլի էֆէնտի, վասն զի Մէրեք-Գուլի էֆ. իւր ատենապետական աթոռին վրայ իբր կուսակցական պետ մը վարուեցաւ:

Պարզ երեսփոխան մը, կուսակցութեան պետ մը իրենց կարծիքներն ու գաղափարներն յաղթանակել տալու համար կարող են շատ ճարտար միջոցներու դիմել — ի հարկէ միշտ պարկեշտ եւ օրինաւոր ու օրինաց համաձայն միջոցներու — սակայն ատենապետ մը բնաւ երբեք կարող չէ հետեւիլ նոցա: Կատարելապէս չէզոքութիւն, ահաւասիկ ատենապետին պաշտօնը, պարտականութիւնն ու յատկութիւնը: Ոմանք կը կարծեն թէ Մէրեք-Գուլի թարութիւն էֆէնտի մեղանչեց իւր այս պարտականութեանց դէմ եւ որ աւելին է նախ-

մուսայութեան տուաւ: Ազգ. Ժողովոյ օրէնքներն որոց աւանդապահն է: Արդիւնքն ակնեւեւ է, Մէրեք-Գուլի էֆէնտի որ ստուար մեծամասնութիւն մը ունէր իւր հետ այսօր եւս կը պահէ իւր կողմնակիցներ թէպէտ ոչ այքան բազմաթիւ: Եթէ Մէրեք-Գուլի էֆ. ի այդ պարտութիւնը չը լինէր, Ազգ. Ժողովը փոփոխաւոր ճանապարհի մէջ կը մտնէր: այլ եւս ամէն ատենապետ ինքզինքն ազատ պիտի համարէր ըստ հաճոյս տնօրինելու: Բայց այս դասէն առաջին օգտուողն անշուշտ Մէրեք-Գուլի էֆ. պիտի լինի: Մէրեք-Գուլի էֆ. ինք թնամի մը չենք: Եւ զիտնալով թէ որքան սակաւաթիւ են Ազգ. Ժողով մը կառավարելու կարող անձինք ի հարկէ կը փափագինք որ նա ինքն իւր գիւրքը զօրացնէ եւ ոչ թէ տկարացնէ: Մէրեք-Գուլի էֆ. ի հետեւելէ ուղղութիւնը պարզ է: Ո՛չ մի խմբի, ոչ մի կուսակցութեան յարկը կամ գործիք լինիլ: Ժողովէն դուրս ոչ վարչութիւն ոչ վարչութեան հակառակորդներուն հետ բանակցել յատակագծի մը յաջողութեան համար: Օրէնքներն ամենայնպէս նշանակեցողի յարգել:

Ահաւասիկ իւր հետեւելիք ընթացքն: Եթէ այս տարի ճանապարհ իւր անցեալ սխալն հետեւի նոր ուղղութեան մը, իրեն հետ կը լինին Ազգ. Ժողովոյ մեծամասնութիւնը, մոռնալով հաւանօրէն անցեալը, իսկ եթէ շարունակէ ինչպէս յանցելումն, կ'բաղմանան իւր գործունէութեան անհայտ թշնամիներն, որովհետեւ որքան լաւ գործէ թշնամիներ չպիտի պակսին:

Ա. Ա.

ՀԱՅԳ Ի ԼՈՆՏՈՆ

Անցեալ շաբթու մէջ Լոնտոնի Հայքի Նայթսպրիչ Ուէլքինգթընի Դքսին դպրոցին մէջ բացին Արեւելեան ցուցահանդէս կամ Կալա մը ի նպաստ հաստատման: Հայկական նոր եկեղեցւոյ մը յարեւմտեան Լոնտոն: Յարդ Լոնտոնի Հայոց միակ կրօնային հաստատութիւնն էր փոքր չէնք մը ի Դլարէնտըն Բօու: Յուցահանդէսը, զոր բացաւ Դեր. Ե. սայի վարդապետ հոգեւոր հովիւ Լոնտոնի Հայոց, յոյժ նորատեսիլ եւ գեղեցիկ երեւոյթ մ'ունէր, ըստ վկայութեան Լոնտոնի լրագրաց: Բոլոր վաճառողը հայկական զգեստներ հագած էին ամենափայլուն գոյներով եւ ճոխ ոսկեթել բանուածներով: Տաղաւարները կը պատէին հայկական գոյներով կանաչ եւ կարմիր կերպասներ: Վաճառման գարծողութեանց կը հսկէին Լէտի Լէթպրիճ, Լէտի Ֆէյրըր, Տիկին Ռ. Ճ. Կրիվիթս եւ Տիկին Ալպանի: Այս Կալա մեծ յաջողութեամբ պըսակուեցաւ եւ յոյժ արդիւնաւոր եղաւ:

ՍԵՐԸ ԹԵ ԳՈՐԾԸ

(ՆՈՐԱՎԵՊ)

ԵՐՈՒԱՆԻ ծածկանունն ներքեւ «Մասիս»-ի ընթերցողք պիտի ճանչնայ այն գործակալի սիրան որոյ տրոփելն ներքեւ այնքան լեցուցած են ու կը լեցնեն միշտ հայ ժողովրդեան սիրտը: Տեղի վայրկեաններու մէջ, խորին յուզման ըզրններու ներշնչման ներքեւ արտադրուած է այդ նորավեպը:

Ա.

— Տե՛ս, տե՛ս, ըսաւ Միհրան, ջրակաթ բերնով, որպէս թէ հատընտիր ելակնե-րու պնակ մը տեսներ կամ զմայլելի՝ անմատ-չելի առարկայ մը . . .

— Ի՞նչ տեսներ, ըսաւ Տիկին Մաղաբեան՝ պատուհանէն դուրս նայելով: Ատ ալ տեսնաւ ըստ ըլլայ, շարունակեց ցած-ցընելով ձայնն և ջանալով իր դէմքին վրայ ծածկել զշարունակեան նշանները: Սա էրիկ մարդիկ ալ ի՛նչ աղէկ էստո՛ւ, ի՛նչ աղէկ ծոփ ունին:

Քանի որ կին մ'էր որ համասեռ էակի մը վրայ այսպէս կը խօսէր, համոզուեցայ թէ Միհրան ճամբորդապէս գեղեցիկ կին մը կը ծանուցանէր: Աւտի, Տեառակը ձեռքէս ձգեցի, ծաղիկն ալ ու պատուհանէն դուրս նայեցայ ես ալ: Ակնկալութեան վեր բան տեսայ:

Մանկամարդ բարձրահասակ կին մ'էր: Կէ բաւր քիչ էր այսպիսի էակի մը համար: Երեւոյթն հագուած էր, եւ այնքան վա-յելուշ, գէմքին այնքան գեղաշարժար (as-sorti) էր որ, կարծես թէ գէմքին հետ ստեղծուած էր այն դիւպայական հագուա-ւոր: Սեւ, լայն եւ երկայն յոնքերու տակ՝ մութ չափանակագոյն աչքեր, զորս երկար արտեւանունքներ կը գիտաւորէին և իրենց չարժամար գողցես կը բազմապատկէին: Խո-հական, գրէթէ դաժան նայուածքով, որոյ խորը խանդաղատալի ժպիտ մը կը թաք-չէր իրեն վերապահեալ գանձ. շանթի մը պէս կ'իյնար այն նայուածքն ո՛ւր որ յի-նար: Հոգեոյն յատակներէն ամեն բան դուրս կը հանէր: Եւ ձերմակ էր կինն, ստուերախառն զմայլիչ ու պակուցիչ: Ըս-պիտակութիւն: Դունները քարացած մնա-ցին տեղերին: մարդկային գեղոյն անա-սունք քան զմարդիկ առաւել զգայուն են թերեւս:

Անցաւ:

— Հիմայ Տեառակը ձեռք առ նորէն, քսաւ Միհրան, բերնէն ջուրի տեղ՝ աչքէն արտասուք կաթելով հիմայ:

Աւր մեքենաբար. բայց ձեռքս ծաղի-կին չը տարի. աչքս մագնիսուած ծաղի-կէն, կը նայէր ու կը նայէր: Եւ հոգի մ'էր. հայերէնը չը գիտեմ: Զօրցած լեհոյ մը, տափակցած՝ տեառակին մէջ: Այնքան թե-թեւ էր. և ինձ թուեցաւ թէ գետնէն վեր չը պիտի լինայի վերցնել զայն:

— Մաղիկը գետինը պիտի մնայ, հրա-մայական կերպով հարցուց Միհրան: Ես այդ Տեառակէն եւ այդ ծաղիկէն թանկագին յիշատակ չունիմ: Թէ որ կոխտուի՝ կամ կորսուի՝ ծաղիկը:

— Ե՛յ ի՛նչ կըլլայ, բացագանչեցի ես ալ. այն կինը՝ տուաւ քեզ այդ ծաղիկը՝ որ այն-քան կը դուրդուրաս վրանս եւ ձեռքս զէպ ի ծաղիկն երկնցուցի, թէ եւ չը կրցայ նորէն առնել զայն, ինքնիրեն բացատրութիւն մը փնտռելով այս խորհուրդին:

— Այո՛, այն կինը, այն անցնող կինը,

պատասխանեց Միհրան՝ Տեառակն առնե-լով ձեռքէս եւ անոր մէջ երկուգածօրէն գետեղելով ծաղիկը:

Գլուխս պատուհանէն դուրս հանեցի. աներեւոյթ եղած էր. միայն ետեւէն գը-նացող սպասուորը տեսայ, որ փողոցին ան-կինը կը դառնար:

— Այն անցնող կինը, շարունակեց Միհ-րան կերկերածայն, տուաւ այդ ծաղիկն ա՛յն երիտասարդին, որուն տխուր Տաղարանը կը կարգաս այսօր:

— Բայց . . . կի՞ն էր՝ երբ այն հէգ ե-րիտասարդին տուաւ այդ ծաղիկը:

— Այո՛, կին էր: Իր ամուսինէն զատ ոչ ոք կը սիրէր եւ կը սիրէ. բայց եղբայր չունենալով, եղբայրական անբացատրելի խանդաղատանք մ'ունէր այն քանաստեղ-ծական էակին համար, որուն անունը չես գտներ այդ Տեառակին մէջ, այլ պիտի գտնես այդ անունն անջնջ դրոշմուած բո-ւր զայն ճանչցողներու սրտին մէջ:

— Անունը քեզի թող ըլլայ, իր պատ-մութիւնն ինձ ըրէ:

— Խեղճ ին պատմութիւնը, գոչեց Տի-կին Մաղաբեան:

Միհրան այլապէս, եւ ըսաւ: — Խեղճ մ'անուանե՛ր, Տիկին, այն չըբ-նաղ երիտասարդը, մարդկային անիրաւո-թեան այն զոհը . . . կամ մանաւանդ սիրոյ նահատակը: Խեղճ մ'անուանե՛ր. զաւակդ վերջը կը խեղդենայ . . .

— Կախիդ ետքը ըրէք. պատմութիւ-նը, բարեկամ, պատմութիւնը:

Բ.

— Ո՛ր մէկ պատմութիւնը, ձայնեց Տի-կին Մաղաբեան: Քսան տարի է որ Բարիդ ես նէ, ինչե՛ր անցան հոս. հապա՛: Դուն բան մը չիմացար: Է՛հ, հարկաւ. Բարիդի աղմուկին մէջէն բան կ'իմացուի:

— Քանի՞ պատմութիւն ունի այդ երի-տասարդը:

— Տիկինը բան մը չը պիտի թողու՝ որ ըսեմ այսօր:

— Ըսէ՛, ըսէ՛, քեզի ո՞վ արգելք կ'ըլլայ: Մեր Միհրան էֆէնտին շատ դիւրագգած է: Աղէկ բնաւորութիւն մ'ալ ունի. կ'ուզէ որ մինակ ինք խօսի:

— Դուք խօսեցէք, Տիկին, դուք պատ-մեցէք. ձեր բերնէն անշուշտ աւելի արտո-ծով պիտի լսէ Պ. Երուսեմ:

— Ես պատմեմ որ ելլաս հայերէ՛նս Կը-պէթէ ընես: Ես Հայուհեաց ընկերութեան Ընդհ. Ժողովոյ անդամ կամ անդամակի ե-ղած չեմ որ աղէկ հայերէն խօսիմ: Խօսէ՛, Բայց ո՞ր պատմութիւնը պիտի ընես. ընդ-հանուր պատմութիւնը, Սիրայիկն ընդհա-նուր պատմութիւնը, որ միւս Ընդհանուր պատմութեան նման երեք մասի կը բաժ-նուի: Անձնատարմութեան պատմութիւն, Հիւժմախտի պատմութիւն, Խեղադարո-թեան պատմութիւն, զանց ընելով նախա-պատմական ժամանակն՝ որ նոյնպէս ան-շուշտ քանիք չըլաններու կը բաժնուի:

Սիրայիկն հետզհետէ աւելի կը հետա-բերուէր ընդարձակ, բազմապիսի, բազմա-չըրջան կեանք մ'ունեցած ըլլալու էր այդ երիտասարդն, որուն ձեռագիրն աւելի ա-մուր կը բռնէր հիմայ ձեռքս մէջ: Կա-տարեալ վիպական էակ մը, քանի մը վի-պասանութեանց համար նիւթ մատակարա-րող կեանք մը, զիցազն մը՝ որու նմանը դուն ուրեք կը գտնուի իրական կեանքի մէջ . . .

— Սիրայիկն երկար կ'ըլլայ, շարունակեց Տիկինը. ժամանակակից պատմութեան սկը-սէ, խելագարութեան կեանքը պատմէ՛, Ամենէն ալ կարճն եղաւ այդ շրջանը: Այո՛, իրաւունք ունիս, Միհրան, այդ տղան խելոյ չէ՛ր. . . այդ տղան կնոջ համար բանաս-տեղծ եղաւ թերեւս, բայց կնոջ համար չը խելոյեցաւ: Ու աղ կնկանը համար պիտի խելոյեցար. ինչի՛ն. սը-ւէ պոյ՛ն, լան լան Խեղճերուն. Խեղճ Խեղճ կախած սա-աւի՛ն . . .

— Ա՛հ, մի՛ քսէք Տիկին, առանց առ-րիչներուն յարգը նուազեցնելու՝ ձայնար-կեցի՛ այդ կինը մեծ գեղեցկութեան տէր է: Բոլոր Բարիդի մէջ, բոլոր ճամբորդու-թեան մէջ չը տեսայ նմանը: Այդ կինը նուրբ արեւելեան գեղեցկութիւն մ'է. և մարդ ուրիշ պատճառի պէտք չունի խել-դենալու համար . . .

— Սիրայի, ի՛նչ ալ նշանակէ իր անու-նը, ի՛նչ ալ ըլլայ իր արիւնը, այն կինը համար չը խելոյեցաւ, ո՛չ: Ան տղուն վի-ջին գծազդուութեան պատճառը մարդ եղաւ. մարդ մը որ հետէն կամ մօտե-ազդա՛նութիւն ալ ունէր իրեն հետ: Այդ մարդը ուրիշ մէկ ազդականին ալ խաղ-ըրած էր. մէ՞կ խաղ. բանի՞ անդամ: Ժա-ան: Մէնշուր Գոյնաբէ՛ն է. Բէնշային վի-տանէն աւելի զահեք քրտն ունի. իր զ-հերուն մէջ Անարաքի ալ կը գտնուի, եւ կու ետուն խելացի Անարաքիներ: Ա՛լ հա-կըցի ի՛նչ վարպետորդի բան է:

— Է՛յ ի՛նչ խաղ խաղաց հէգ Սիրայիկ:

— Խաղ մը բոլոր Պոլսոյ ու գաւառ-ժողովրդեան ալ խաղալու վրայ է. . . Մոռ-երեք Անարաքի. հիմայ Կախած խաղ-կ'ըլլէր իր. . . Բոլոր ժողովրդեան խաղ մը-ղալու վրայ է: Ահա ին ձեռնարկութիւն ըրած է: Երկանս քիթէն ալ պիտի բռնէր անսահման հարցնելու իր, ան շնորհով մը գիկը՝ որ առջի բերան իրեն հետ էին՝ չո՛ւսուսու-լով մը օձիքնին աղատեցին: Եւ կըս արթնցաւ ու չը ստորապրուեցաւ:

— Ատանկ խաբէական գործեր Գաղ-մէջ անգամ կը յաջողին երբեմն. ո՛ւր Բա-հոս: Բայց հրապարակագրաց պարտք միամիտ ժողովուրդն զգուշացնել այդ-խաբերայներու դէմ: Ձեռնարկութիւն այն ժամանակ վստահութիւն պէտք է զէ, երբ ձեռնարկուն վստահելի անձ է:

— Գէշը ան է որ տնվատահելի մարդ լի-ամենքը չը գիտեն քնականաբար: Ի՛նչ ա-կ'ըլլար որ այսպիսի վիպական խաբերա-րու ցանկը կախուէր կամուրջին զուլումը չոր տաւերով, որպէս զի ամեն մարդ կարգար եւ զգուշանար:

— Ետեւ գիտեմ էք, Տիկին. եւ չեմ գ-մանար Զեր սեպին համար. ըստ իս, քաղաքի աւաղախապետներուն ոչ թէ նունը, այլ իրենց անձն խաղ կախու-էր կամուրջին զուլումը: Գիտե՛ք այդ սակ մարդիկ ի՛նչ վնասներ կը հաս-նկերութեան. պէտք չէ միայն հա-արդի զոհերը. պէտք չէ միայն հա-գործի մէջ իրենց քրտն զոհերը: Եւ հաշուոյ դնել թէ Կառնաղականութիւն օրինօք՝ անձնական օրինակին ազդե-թիւնն ալ աւելնալով՝ չարագործ մար-դերուն ալ աւելնալով՝ չարագործ մար-դի մարդոց զաւակներն իրենց առաջի-հերն են, որք՝ իրենց կարգին՝ զոհեր ընեն. զոհ պիտի ըլլան իրենց զաւակ-զոհ պիտի ըլլան ա՛յն մարդիկ՝ որոնց գործ պիտի ունենան: Զբաւեր վար-բանաց մէջ բարոյականի կանոններն ա-ղել, պէտք է վարժարանէն դուրս

որ բարոյականը իր ընդարձակագոյն նշանակութեամբ յարգուի :

—Բայց ո՞ւր կը սկսի եւ ո՞ւր կը յանգի բարոյականը, կամ թէ ի՞նչպէս կը սահմանեն բարոյականն, հարցւոյ Միհրան էֆէնտին մտայնող :

—Թողունք, եղբայր, բնազանցութիւնը Սիրայր՝ ըստ որում ազգական՝ յայտնի է թէ վստահութեամբ վարուած է այդ խաբէրային հետ . կամ թէ օրինաւոր ձեւակերպութեանց կատարման վրայ պնդած է, բայց այդ կատարումը ճարտարութեամբ յետաձգուած է խաբէրային կողմէն : Հետեւեալն ա՛յն եղած է թէ պարկեշտ եւ աշխատաւոր երկատասարդը տեսնելով թէ պայմանագրութիւնը չը յարգուիր՝ քանիցս ըրած ազգարարութեանց վրայ, յուզուած է, արիւնը գլուխը ելած եւ ֆէնիքաթէն սեւեռաւ մ'ուռնեցած է : Սակայն . . . Տետրակին մէջ սէր կայ միայն . . . :

Գ.

—Ունեցածը ես պատմեմ, եթէ կը հաճի Տիկին Մաղաբեան, ըսաւ Միհրան էֆէնտին : Օր մը, փողոցէն անցնող ա՛յն կինը՝ որուն վրայ սքանչացար . . .

—Նորէն ա՛յն կինը, ընդ միջեց Տիկին Մաղաբեան սրտնեղութեամբ : Ես գործ ունիմ, վեր պիտի երթամ :

Ձեր ներկայութիւնն հարկ է, Տիկին, որպէս զի ուզուէր Միհրան էֆէնտիի սըխալներն, ըսի : Մեր բարեկամը շարունակեց .

Օր մը, երկնքէն իջած . . . ա՛յն կինը, որուն վրայ սքանչացանք, Մայր'ս ամայ օր մը, պարտիկի մը մէջ, ուր արք եւ կանայք՝ բոլորածեւ բազմած՝ ամբողջ ծիածան մը կը կազմէին, սրբազնելով կամ լրացնելով բնութիւնն՝ որ միայն կրնար ծիածան մը կրնայ պարզել մեր աչաց, ա՛յն կինն որ զոյգ անուն ունի, այլ որ իր թաշկինակին վրայ Սիրայրին իրեն տուած անունը կը գնէ ծաղիկ չը սիրէր . . .

—Հապա՛ աղամանդ կը սիրէ, բացագանչեցի :

—Ձը գիտեմ . բայց ինձ կը թուի թէ՛ աղամանդը ինքնուստ կ'ենեն գետնը իր թեւին, իր պարանոցին, իր լանջերին, իր ճակտին վրայ . . .

Տիկին Մաղաբեան անհամբերութեան շարժում մ'ըբաւ նորէն : Միհրան էֆէնտի շարայարեց .

—Ձերազգեղ ծաղկատի կնոջ ա՛յն խօսքը՝ Վաղիկ չեմ սիրերս անբացատրելի տըպաւորութիւն մ'ըբաւ Սիրայրի վրայ : Բանտեղծը միամտութիւններ ունին, որտի հաւատքներէ ոչ կ'որոտան յաճախ մահաբեր կ'ըլլայ իրենց : Սիրայր իր սրտին մէջ ա՛յն պէս կը հաւատար թէ կանացի նայուածոց ազդեցութեամբ կը փթթին ծաղիկներ . կը հաւատար մանաւանդ թէ սրտին թագուհւոյն ախարկներէն կը ծնին ամենէն գեղեցիկ, ամենէն քաղցրաբոյր ծաղիկներն : Արդ, կինն երբ իր աչաց լուսոյն ծնունդը չը սիրէ, ինչպէ՞ս կրնայ խանդաղատանք տածել բանաստեղծ երկատասարդի մը վրայ : Այսպէս խորհեցաւ Սիրայր . խորհեցաւ թէ չէր սիրուեր, չէր երբէք սիրուած ա՛յն կնոջմէն, որ քեզ ու սիրուհոյ մէջտեղ աննման անսահմանելի ինչ էր իրեն համար : Ուստի տրամեցաւ ցմահ ա՛յն բառ մը չարտասանեցի՝ իր չիթնեմք ա՛յն ընկերութեան մէջ : Ձեր արդէն շատ խօսող . . .

—Բայց շատ սիրող էր, ընդ միջեց Տիկին Մաղաբեան, իր կեանքը կ'անցընէր սիրելու եւ սիրային թղթակցութիւններ գրելու արձակ եւ ոտանաւոր : Վ՛ր գիտէք անի՞ կրնէր, քանի՞ օրիորդներ . . .

—Հակառակը չեմ ըսեր : Մէր ծնած էր այն տղան : Բայց պատահած եմ՝ զայն սիրուհոյ մը հետ . պատահած է որ իր սիրուհեաց մէկը քանին միատեղ գտնուին . եւ նա կը հառաչէր բացակային համար . . .

—Շատերու կը պատահի այդ . հեռու գտնուողը միշտ անուշ կ'ըլլայ :

—Պատահած է որ մէկ քանին իր սիրուհեաց միատեղ գտնուէին, որոնց մէջ ըլլար նաեւ նա՛ զոր իր սրտին թագուհին կ'անուանէր : Այն ժամանակ հառաչանք չուէր . . . բայց միայն Անծանօթին համար, որ ծածկուած է տիեզերաց ետեւ եւ զոր կին մ'ըլլալ կը հաւատար . . . :

Դ.

—Աւարակեցի՞ր պատմութիւնդ, գոչեց Տիկին Մաղաբեան : Հիմա իրօղութիւնն ա՛յն է, բարեկամ, որ այդ տղան ա՛յն կնոջ բերնէն այդ խօսքը լսեց առաջ . . . չեմ ալ ուզեր ա՛յն տղեղ բառը բերանս առնել . . . խենդեցած էր :

—Այդ բառն արդէն իրաւունք չունիս գործածելու, նորէն կ'ըսեմ : Մտքի ու մարմնոյ տարապայման յոգնութիւն, զայրոյթ, սրտի անհափ փափկացում մանաւանդ, անկանոն վիճակի մը մէջ դրին այդ երկատասարդին սիրտն ու գլուխն, եւ ո՛չ բժիշկ մը ինքնաբերական բառն արտասանեց : «Գլուխ» կ'ըսէր կը կենար, ու ձեռքն ալ սրտին վրայ էր . հարցման մ'իսկոյն չէր կրնար պատասխանել . եւ օր մը իր պատասխանը իրարու հակասական եղան : Բայց այսքան, Նոյն օրը բժիշկին դիմեց, եւ յաջորդ օրը բարւոքում մը գգացուեցաւ իր վիճակին մէջ : Այդ բարւոքումն ալ գլխաւորապէս պարտական եղաւ — շիտակէն ըսելով — գեղի մը, որու գաղտնիքն ինք գիտէր և զոր իր մօրը պատրաստել կու տար : «Գեղ մ'ալ գիտեմ — կ'ըսէր — որով մօրդ ամենէն հեշտալի կերպիւ կը մեռնի : մեռած տտեն ա՛յնպէս կը թուի մարդուն թէ Աղին դրախտը կը մտնէ երկու հրեշտակի զրկացը մէջ » : Այդ գեղին գաղտնիքը չէր տար մարդու, քանզի — կ'ըսէր — եթէ այդ գեղը ճանչցուի, անձնասպանութիւնն աշխարհի մէջ շատ կը տարածուի . . .

—Ադ երկար պատմութիւնները ձգենք հիմա : Սիրայր ա՛յն կնոջ համար չխենդեցաւ . . .

—Ա՛հ, Տիկին, անգամ մ'ալ մ'արտասանէր այդ բառը բարեկամիս համար . . .

—Ձարմանալի բան, բարեկամդ ժամանակաւ փափագ կը յայտնէր խենդի վիճակն ունենալու, անձնասպանի . եւ հիւժեակի վիճակին ծանօթանալէ յետոյ, իր փափագը լրացաւ . գուն բարեկամէ՞դ աւելի բարեկամ ես իրեն : Բարեկամդ, ո՛չ, ա՛յն կնոջ համար խելը չը կորսնցուց : Կնոջ բերնէն ա՛յն խօսքը լսեց առաջ — զոր դու մահաբեր կը համարիս իրեն համար — անսովոր տրամութիւն մը տիրած էր Սիրայրի վրայ : Այն պարտեղի խօսքէն օր մը առաջ, եղբայրս զայն չոգենալին մէջ տեսած էր . ծայրի ֆանտազի գացեր, գլուխը ծուր, խորունկ, խորունկ կը մտածէ կոր եղբոր Սիրայրին խօսքը բնաւ չէ ըրեր եղբորս հետ . գաղտնիքներու վրայ խօսեր է : Ըսեր է թէ գէշ կրթութիւն կուտանք կոր մեր տղայոց :

խաբէրայութիւնն օր աւուր աւելնալու վրայ է հրապարակի վրայ, քանի որ անպատիւ կը մնայ . այդ խաբէրայութեան դէմ գինեղու է դպրոցական սերունդը, որպէս զի շուկային վրայ չը շահագործուի եւ այս պատճառաւ աշխարհքէն զգուի Մանուգեալ խաբէրաներ կան : Ազգային կամ ընդհանուր պատմութեան անուանց հետ եւ այդ անուններէն աւելի գոյ ընել տալու է այդ խաբէրային անուանքը, այս' . յայտնելու է թէ ի՞նչ լեզու կը գործածեն, ի՞նչ դարաններ կը լարեն, ի՞նչ կերպով կը լարեն : Ցատուկ ուսուցիչներ պատրաստելու է այս բանին համար : Պատմութեան փիլիսոփայութեան գործնական ճիւղն է տալ . այս ուսումը պարտաւորիչ ըլլալու է բոլոր վարժարանաց մէջ : ամենէն աւելի խնամով այս ուսումն աւանդուելու է . . .

—Այն միջոցին չէ՛, Տիկին, որ այդ մեծածնութիւնն ունեցած ու յայտնած է Սիրայր, քանի տարիէ ի վեր նա կը խորհէր ընկերութեանց վիճակին վրայ, որոց մէջ տրամութեամբ չարին յաղթանակը կը հաստատէր : Բարւոյն վրայ . քանի տարիէ ի վեր կրթութեան արմատական բարենորոգման պէտքին վրայ կը խօսէր, — թէ եւ ամեն բարենորոգումներ կատարուելէ ետեւ ալ իր «Գեղ» ջնջի հոգին տոգոհ պիտի մնար միշտ, եւ միշտ անծանօթ անգիւտ աշխարհի մը համար պիտի հաւաքէր . . .

—Կարելի է առաջ ալ այդ մտածումներն ունենար եւ այդ խօսքերն ընէր, բայց եղբորս հանգիստած օրը տեսնող կը խօսի կոր եղբոր : Շատ ընդարձակ, ընդարձակ խօսք է այս նիւթին վրայ, պէտք է՝ ըսեր է՝ մեր վարժարանաց մէջ բերել տալ հրապարակի հռչակաւոր խաբէրաներուն պատկերները և ողջոյց լաւ ծանօթացնել և ուսումնասիրել տալ ա՛յն դէմքերը : Մէկը դաժանեբեր, յօնքերն արտեւանունքներուն մօտեցած ու խառնուած անոնց, և կարծես թէ կ'ըսէ բեզ . «Անպատճառ ինձի պէտք պիտի ունենաս, ինձի հետ գործ պիտի ընես, պիտի խաղալսեմ, պիտի խաբեմ, քեզ պիտի կողոպտեմ քեզ : Նախ պիտի կասկածիս, յետոյ պիտի կուհես, էն վերջը յայտնի պիտի տեսնես որ կը կողոպտուիս . սակայն ինձի դէմ՝ բան մը չը պիտի կրնաս ընել : Ընդհակառակը, քանի որ ինձի հետ բռնուած ես, ինձի հետ գործ պիտի ընես մինչեւ վերջը . բարկութենէդ ինքզինքդ պիտի ուտես, պիտի հիւժնդնաս . գործիս չի գար որ շատ ժամանակ հիւանդ մնաս, հանք մըն ես . պէտք է որ առողջ ըլլաս որպէս զի բանեցնեմ քեզ . երբ որ կէս առողջ կէս հիւանդ Պօլիս իջնաս, 4էֆէ ազէ՛կ է քեզի հեգնաբար պիտի հարցունեմ : որովհետեւ ամեն բանէ առաջ ես գէ՛շ մարդ եմ » : Այս անկեղծ, աներես, անպատկառ խաբէրան է : Ուրիշ խաբէրայ մը ժպտուն դիմօք կ'երեւայ ամենուն . արդար մարդու մը խղճի կատարեալ անդ որոտութեան կերպարանքը կը կեղծէ : Լրագիրներէ չըլլապատուած է՝ բայց եւ ոչ մէկն ալ կը կարգամ՝ կ'ըսէ . գիտեմ մէջերնին ինչ գրուած է : Այս յանձնապատասխանութիւնը կամ յուսկնութիւնը քիչ մը ծիծաղելի կը թուի քեզ : Բայց քանի որ խօսի, կը տեսնես որ դէմդ արդարեւ մեծ, ամենազէ՛տ, ամենագեղա՛լ մարդ մը ունիս . . . Երեսփոխանէ, թաղական եղած է, նոյնպէս հոգ արարծու . քառասուն ընկերութիւն հիմնած ու կործանած է (այս' . այսպէս կը խոստովանի) . իրեն հետ մարդ գլուխ չի կրնար ելլալ, որովհետեւ, մէյ մը՝ կիրք չունի . այնուհետեւ միշտ ժողովրդ-

եան բարեւոյն համար կ'աշխատի եւ այդ պատճառաւ քանի մը հազար ոսկի պարտք ըրած է, վերջապէս շատ մարդու բարիք ըրած է՝ փոխարէն ապերախութիւն գրտնելով: Հիմայ կ'ուզէ բեզի ալ բարիք մը ընել, բեզի գործ մը կ'առաջարկէ. գառ սենեակ պիտի ունենաս, հրամանիդ տակ երեք բարտուղար ու ծառայ՝ որքան կ'ուզես: Այս բաները քեզի կրնէ, որովհետեւ բեզի շատ կը սիրէ եւ որովհետեւ քու արժանիք միայն ինք կը ճանչնայ: Ամսական ի՞նչ պիտի տայ: Ամսական խօսք մ'ընէր. « Բայց ցոյց կու տայ. ան Բայց քու կ'է. ինք բեզի զաւկի պէս պիտի նայի. երբ նեղութիւն ունեցար, մի՛ քաշուիր, ըսէ՛. Գոն իր գործերուն հոգին ես, բենէ ի՞նչ պիտի խնայէ: Բայց այտի, մօտերս իր գործը պիտի ընդարձակէ, արտաքին կարգի չահէր պիտի ունենայ: Եւ իր նպատակն է միշտ մարդկային ազգի բարօրութիւնը: Տէրեւքա՛ն եկեղեցի մ'ալ պիտի հիմնէ...: Բայց ադ ետքի գործ է: Յակոբ, խահուէ մըն ալ. պօլ չէքէրով: Ահա խաբերայի տիպար մ'ալ Ուրիշ մը տեսնենք. Ասի ձեռնոց կը դնէ, Բաւա՛րի՛ն թեւին վրայ է. քաղաքավարութեամբ այլ եւ բարձրութեամբ մը կը կը բարեւէ. արարեքէն շատ մը բառեր իրարու ետեւէ կը շարէ եւ իր քաղցր արտասանութեամբ դեղ կը հմայէ. կը խօսի միշտ՝ անցնող կռուներուն ակնարկելով, եւ աւելի բարձրացնելով կամ աւելի քաղցրացնելով իր ձայնը. ստէպ կանանց ձեռնոցը կը սեղմէ՝ հետք խօսելով միշտ. գրէթէ բայ չը կայ խօսքերուն մէջ. արարեքէն վերացական բառեր են որք ձայնի ելեւէջներով իրարու կը յաջորդեն վէտ ի վէտ՝ ալեաց նման. շատերն՝ արդարութեան, իրաւանց, քաղաքակրթութեան համանիշ են: Կը համոզուիս. ի՞նչ հասկցար, չը գիտես. բայց կը համոզուիս. քսակդ... կը բացուի: Իբր թէ ամօթը զո՞ւրկն ունենայ ոսկիին համար, կը թախանձէ որ քսակդ՝ առանց մարդ տեսնելու՝ նորէն գրպանդ դնես: Ամօթահար կը մնաս՝ ըրած կոպտութեանդ համար. ու չփոթութեանդ մէջ թէ իւր ձայնին ու աչաց մագնիսութեամբ ձեռքդ իր գրպանը կը տանի... քսակդ: Արդէն ծանր մարդ էր, իրաւունք ունի հիմայ աւելի ծանր ըլլալու. դու բեռէդ թեթեւացար, շա՛ր կը քալես. ինք աւելի ծանրացաւ, եւ աւելի ծանր կը քալէ, եւ քաղաքավարութեամբ մը կ'իմացնէ թէ ալ կրնաս շա՛ր գործիդ երթալ... — Զըյգեւեցա՞ք, Տիկին:

— Յոգեւիմ կամ ոչ, պիտի ապացուցանեմ, պիտի համոզեմ ձեզ որ գործին պատճառաւ Սիրայրի խելքին եկաւ: Եղբօրս՝ ա՛ս խօսքերն ըրեր է շոգեւեալին մէջ, ստէպ ստէպ հառաչելով, եւ մերթ ընդ մերթ զըլուսը ձեռքին մէջ առնելով: Երեսներն ու ականջները կը կարմրին եղբր ատեն ատեն: Եղբայրս խզճացի՛ր է. տրտում տխուր տուն եկաւ. Էրէ ըսա՛ւ ըսինք. « Սիրայրին բան մը պիտի ըլլայ՝ վիճակին չը հաւնեցայ, » ըսաւ:

— Զեմ անշուշտ ըսեր թէ գործը գեր մը չը խաղաց. բայց սէ՛րը, սէ՛րը...: Գործի կարեւորութիւն կու տա՞ր, որ իրեն հիւանդութիւն բերելու չափ գործին համար բարկանար, ըսաւ Միհրան մտմտալով.

— Գործի կարեւորութիւն ո՞վ չի տար որ ան ալ չի պիտի տար. անօթի կեցած ունի՞ս: Այնուհետեւ Էրէն խաբերայի մը հանդպած ունի՞ս, որ բոլոր իրաւունքդ, բոլոր աշխատութեանդ արդիւնքը ձեռքէդ յափշտակէ, ինքզինքն արդար, մարդասէր ցոյց տալէն ետքը:

— Բայց ինք միեակ ադ գործով չէր

ապրեր. ուրիշ գործ ալ ունէր, գիտէք, Տիկին: Եւ ո՞րքան զգայուն, ա՛յնքան ալ փիլիսոփայ տղայ էր. կրնար իր պաշարիւնութիւնը պահել ամենէն ծանր պարագաներու մէջ անդամ: Այնուհետեւ, գիտէք, ո՞ր որ բժշկին գիմելու չափ ծանր զգաց իր վիճակը. ա՛յն օրը, որուն առջի իրկունք իր պաշտած կնոջ բերնէն լսած էր այն մահաւոր խօսքը. « Ծաղիկ չեմ սիրեր ես: » Այդ խօսքը կորսնցուց բարեկամս... — Բայց բժշկին ի՞նչ պատմեց. սէ՛րը թէ գործը:

— Գործը: Սակայն բժիշկը գիտէր սէրը, կամ գէթ կը ճանչնար Սիրայրը:

— Բժիշկ մը՝ խոստովանութեան կամ յայտնութեան մը վրայ վճիռ կուտայ ու գեղազիր կը գրէ, և ոչ երեւակայութեան կամ երթագրութեան մը վրայ:

— Ե՞րբ աւելի մօտէն կը ճանչնայի Սիրայրը թէ դուն:

— Գուն անշուշտ. բայց ես աւելի մօտէն կը ճանչնամ մարդոց սիրտը: Մարդիկ աւելի չափաւր են քան սիրամուր:

— Ի՞նչ կ'անայք:

— Կանայք աւելի պճնամուր են քան սիրամուր:

— Գէթ ի յարգանս ձեր սեւին՝ պէտք է բացառութեանց վրայ խօսիմ: Եւ մեր սեւին մէջ՝ բացառութիւններէն էր Սիրայր:

— Լաւ, ընդունիմ: Բայց այն կնկան համար չէր կրնար խենդեմալ բարեկամդ: Ինչի՞ն համար խենդեմալ այն կնկան. թիւրքի կնիկ է կատարելապէս: Զը գիտես՝ խոնարհ է թէ հպարտ, զածա՞ն թէ համեղ. անբացատրելի, անհասկնալի բան մըն է: Կին ըսածդ՝ կրնալու ես ըսել թէ աղուօր է, ագեղ է, հեղ է, գոռօղ է...:

Ե.

Այս պատմութիւնը, թէ ե ոգևորւած երկուսն պատմիչներուն հակառակաօրոնութեամբ, թմրութիւն ազդեց ինձ: Աղէկը՝ տո՛ւր բան է օժտեալ և զգայուն երիտասարդի մը այդ վստահան: Ո՞վ եղած էր պատճառ, ես ալ ինքնին կը հարցնէի, եւ կը յիշէի Նօդա-Տօմի բառն. ի՞նչ կրնայ մարդու ընել նախառահմանութեան դէմ: Մին զոհ ըլլալու սահմանեալ է, միւսը դահիճ, մին՝ սողալու, միւսը՝ սաւառնելու. մին տառապելու, միւսը վայելելու է: Ի սկզբանէ անտի այսպէս եղած է: Ի դո՛ւր կամեցած են մարդիկ, ի դո՛ւր կամինք: Հարկն է որ զմեզ կը վարէ. ճակատագիրն է զոր չենք կրնար ջնջել, զոր չենք կրնար փոխել:

— Կը քնանա՞ս, Երուանդ, գոչեց Միհրան: Ժամանակ չէ՞ վճիռ տալու: Վճռէ՛ ուրեմն:

Սիրայրի Տեւորակը բացի նորէն՝ փախուստ տալու համար, կամ թէ վճիռն հոն փնտռելու համար: Բայց աւելի դատաւորի պաշտօնէն փախուստ տալու համար, քան զի չէի ո՞վքեր տիկնոջ մը հակառակաօրոնութեան այնպէս հաւատացի՛ր եղած պատմութեանէն, Տեւորակին ընթերցումէն և մանաւանդ այն շնաչափակի կինը տեսնելէս յետոյ թէ՛ Սիրայր աւելի սիրոյ և խոստովանութեան զոհն եղած էր. և այն իր ճակատագիրն էր. ԱՆՆԱԿԻ՛ն: Կը թշուառէի, այո՛, Տեւորակն, եւ չհալցէի ինկաւ նորէն Տեւորակին մէջէն:

— Ահա Երուանդ վճիռը տուաւ, գոչեց Միհրան: Ծաղիկն Երուանդին տեղ խօսեցաւ: Այդ ծաղիկն եղաւ բարեկամիս կորստեան պատճառ, կամ աւելի ճիշդ՝ ծաղիկի նը-

կատմութիւն անտարբերութիւնը զոր պաշտեցեալ կին մը յայտնած էր, և որ հայհոյանք մ'էր բանաստեղծի մը սրտին դէմ և թշնամանք մը նոյն իսկ կնոջ սրտին դէմ:

Միհրան արտասուագին խօսած ժամանակ, մեղմիւ ձեռքէս առաւ մեքենաբար տարաբաղ թանաթեղին Տաղարանն, և նուիրական ծաղիկն հոն իրկիւղիւ ամփոփեց յետոյ՝ ծնողաց վրայ դրաւ Տեւորակը:

— Այդ ծաղիկը, չ'ըսիր Միհրան էֆէն. ախ, թէ ի՞նչ ատթիւ այն կինը տուաւ հէգ Սիրայրին:

— Սիրայր այն օրէն յետոյ եւր այն հայհոյանքը լսեց, մեքենաբար կը շարժէր. չը գիտէր ինչ կ'ընէր, ուր կ'երթար: Քանի մ'օր ետքը նոյն էր զնոյ կնոջ տունը: Լաւ կը մնար, և կ'ինք՝ շատ ուշիմ՝ հասկցաւ Սիրայրի արտաժամութեան պատճառը: Զանազան խօսելու տայ, և շուտ պարտեղ իջեցուց հիւրը, քաղեց տաղին ծաղիկն որ ձեռքին եկաւ և զայն իր ամենէն անոյ ժպիտին հետ մատոյց առ պատանին՝ ըսելով. « Քեզի համար փրցուցի, Սիրայր, այս ծաղիկը: » Սիրայր վարանեցաւ առնելու: Առաւ հոսկ պապ: Բայց այդ նուէրը չը ջնջեց խօսքին տպաւորութիւնը: Հիւանդութեան ատեն, ամեն այցելութեան կ'ըսէր ինձ. « Ծաղիկ չը սիրեր: » Եւ աչքերը կը լեցուէին: Հիմայ վճռէ՛, բարեկամ, սէ՛րը թէ գործը:

— Կարգաւ յայտնենք մեր վճիռները կամ մեր կարծիքները: Տիկինը նախ պիտի յայտնէ իր կարծիքը:

Եւ Տիկինը ըսաւ.

— Գործը:

Եւ Միհրան էֆէնտին ըսաւ.

— Սէրը մանաւանդ:

Եւ ես ըսի.

— Ա՛յ սէրը, ո՛չ գործը. այլ ո՛ւր ճակատագիրը:

Զ. (*)

Եւ ձեռքս առի հէգ Սիրայրին Տեւորակը...

ԵՐՈՒԱՆԴ

ՆՈՐ ԴԱՍԱԿՈՒԻ
ԹՈՒԱԲԱՆՈՒԹԵԱՆ
ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ
ԵՐՈՒԱՆԴ Կ. ԳԱՐԲԱԼԵԱՆ
Դասաւոր
Զափական գիտութեանց

Ազգային դասատուներէն Երուանդ էֆ. Կ. Գարբալեանի սոյն դասագիրքն, որ կը պարունակէ Թուարանութեան տեսական և գործնական մասը միանգամայն, բազմամեայ փորձառութեան և մեծ խնամց արգիւնք է:

Թուարանութեան բոլոր կանոնը կոկիկ և զիւրմբունի ռոճով բացատրուած են, և մեղրական, շահու և վաճառականական հաշուով վերաբերեալ կանոնը ընդարձակ տեղ մը կը գրաւեն սոյն նոր դասագիրքին մէջ:

Բաց աստի, մասնաւոր ուշադրութիւն եղած է որ իրաքանչիւր կանոնի յարակից խնդիրք Թուրքիոյ առեւտրական գործառնութեանց և առտնին կենաց պիտոյից համաձայն ըլլան, առանց որոյ Թուարանական խնդիրք շատ անգամ տաղտկացուցիչ և աւելորդ կ'ըլլան:

Հմուտ Թուարանին սոյն աշխատասիրութիւնը մեր ազգ. վարժարանաց մէկ զգալի պէտքը կուգայ յրացնել և բառնալ աշակերտաց ձեռքէն աւանդական դրութեամբ պատրաստուած շատ մը դասաւորեանք:

Կը գտնուի ամէն գրաւաճառաց քով. կեդրոնաւորին է Յակոբեան խան, թիւ 11: Եւրոպական գրատուն, Ա. Պիպեւճեանի քով:

Գինն է. 10 դրուշ
Շատ առնողին մասնաւոր զեղչ կ'ըլլուի
886
A—50

(*) Սոյն վեցերորդ գլոյնը կը վերաբերի «Սիրայրի Տեւորակը», բազմաթիւ ծաղիկ վերաբերող հինգ բանաստեղծութիւններէ, զորս հետզհետէ պիտի հրատարակենք «Մասիս»ի յաւաքիկայ թիւին ակեալ:

Մ Ի Խ Ա Ի Լ Լ Է Ր Մ Ո Ն Դ Ո Վ

— Ուրեմն մեզ արդէն ծանօթ խնկարայր բանաստեղծներէն զառ կը դառնան եղբոր աշխարհիս վրայ արտաքին կարգի ուրիշ բանաստեղծներ ալ, կը հարցնէին մեզ չափաբարեկամք, երբ հրատարակեցաւ Մայիս 50ի Մասի մէջ Լէրմոնովի Գ.Ա.Ս.Լ.Ի.Ք.Ք. Կրնանք ըսել թէ Լէրմոնովի անունը գրեթէ անծանօթ է առ մեզ։ Մի քանի անգամ առիթ ունեցած ենք յիշատակել այդ անունն, այլ թէ ուրիշներ ալ խօսած են նորա վրայ, մեզ յայտնի չէ։ Եւ սակայն օտար բանաստեղծներէն ամենէն աւելի մեզ ընտանի պէտք էր եղած լինէր Կովկասու երգիչը։ Բայց մեր մեզի ողիներու միայն քաղցր ու հաճոյ եղած են տաարաւ կի մնչիւնները։

ՀԱՐՈՒՆ ցնցեց չափ սրտեր. յամենուստ աեղեկութիւններ կ'ուզեն Լէրմոնովի վերայ։ Այդ հետաքրքրութեանց կատարեալ գոհացում տալ մեզ դժուար է, սակայն կը հարգէնք ինչ որ գիտենք, օգտուելով օտարազգի մատենագիրներէն, մանաւանդ Պ. Գր. Նիկողոսեանէ որոյ ներշնչման կը պարտինք Գ.Ա.Ս.Լ.Ի.Ք. թարգմանութիւնը։

Ս.

Ռուս ազնուական մ'էր Միխայիլ Լէրմոնով եւ Նիկողա Կայսեր թիկնապահ խումբին սպայներէ մին։ Բնութիւնը պարագեւած էր նմա վեհանձն սիրտ մը, կրակոտ ոգի մը։ Կը խեղդուէր մայրաքաղաքի ապականեալ մթնոլորտին մէջ եւ կ'երթար ձիաթափ թափառիլ ազատ տափաստաններու մէջ։ Կայսերը Կովկաս, կը պարտէր ողին Քաղաքի Նիկողոսեանի, Թէրէքի ազատաւունջ հովերով, եւ երբ կը վերադառնար ի Բեդեքապուրի, աւելի վաճառ, աւելի սէգ եւ աւելի դուռը էր քան երբեք։ Եւ մայրաքաղաքի մեղկաբարոյ ազնուականաց համար հեզնական արհամարհոտ քմածիծաղ մը միշտ կը թռչէր իւր շրթանց վրայ։ Սակայն իւր հանձարն ի յայտ չէր եկած ոչ մի առթիւ։

Օր մը, յանկարծ, 1857 ի Յունուարի մէջ, ամբողջ Ռուսիա սուգի կը մտնէր. չափազանց լուր մը կը տարածուէր բերնէ բերն. Բուլքին վիրաւորեալ է, Բուլքին կը մեռնի։ Վշտաբեկ էր Ռուսիա իւր մեծ բանաստեղծին մահուան վրայ։ Մենամարտութեան մը մէջ ընդունած էր Բուլքին մահախոց վէրքը։ Ֆրանսացի մը որ արժանացած էր Կայսեր շնորհացն եւ որ ամուսնացած էր Բուլքինի քեռիին հետ, թուի թէ հակամէտ էր իւր սիրտն աւելի յօժարակամ տիկին Բուլքինի տրամադրութեան ներքեւ դնել քան բուն իւր կնոջ. գէթ այս կասկածն ունեցաւ բանաստեղծը. մենամարտութեան ձայնատու եղաւ իւր Ֆրանսացի քեռնակալին. մենամարտը մահաբեր եղաւ իրեն։

Այն պահուն ուր ամբողջ ժողովուրդն արտասուելով ի շիրիմ-կիջեցնէր Բուլքինի մարմինն, երիտասարդ սպայ մը թարգման կը հանդիսանար իւր հայրենեաց վշտին ու ցասման եւ զայրադին ու տխուր ձայնով մը կը պահանջէր որ պատժուի ապրատ օտարականը։

«Ո՛վ Զար, իմ Զար, ո՛վ Հայրդ Ռուսաց, կը գոչէր սպայ-բանաստեղծն, անպատու հաս մի՛ թողուր այն բաղդախնդիրն որ գրկեց Ռուսիան իւր ամենէն պանծալի զաւակէն»։

Աղիքներէն, սրտին ամենէն խոր ծաղրէն թռած վշտագին շեշտերով բանաստեղծը կը պաղատէր Կայսեր։ Մենամարտութիւնն օրինաւոր չէր համարեր. մէկ կողմը ցուրտ, անտարբեր բնորոշանք իր մը որոյ ձեռքը չէր դողդոպար եւ անոր դէմ վսեմ ոգի մը, փոթորկալից կրքերով լեցուն սիրտ մը։ Այդպիսի պայմանաց մէջ մենամարտութիւն մը մարդասպանութիւն մ'էր արկածախնդիր Ֆրանսացիոյն կողմանէ։ Եկած էր նա ի Ռուսիա ստանալ իրաւք, պատիւ, շքանշան եւ հարստութիւն. ամէն ինչ շնորհուած էր նմա եւ իւր երախտագիտութիւնն յայտնելու համար կ'ողանէր Ռուսիոյ սիրելի բանաստեղծին Եւ զայս ամէնն արտայայտել վերջ կը գոչէր։

«Ո՛վ իմ Զար, վերստին ոտքերուդ կը փարիմ վրէժ, վրէժ յանուն բանաստեղծին։ Թո՛ղ մարդասպանն ստանայ պատու. հասն իւր գործած ոճրոյն։ Ունին դիւր մեր պաղատանաց. լէ՛ր դատաւոր արդարադ ստ. հատո՛ւ արդար վճիռը. պատժէ՛ ոճիրը...»։ Այո՛, ճշմէ հզօր ոտիցդ ներքեւ իմ երուայդ ցեղն, որպէս զի ապագայ սերունդներն օր մը չ'արձկեն վշտահար գանգատներ յիշելով իրենց հարց վատութիւնը։ Թէ չլուծեցինք վրէժն այդ ոճրոյն, կայ յաւիտենական դատաւոր մը, կայ արդարաւորով դատաւոր մը որ ի բարկութեան իւրում պիտի արձակէ անէծք մը ահեղ. «Յաւիտեան ցամբի ձեր երգերուն աղբիւրը։ Ռուս ժողովուրդը կարող չեղաւ պաշտպանել իւր բանաստեղծն, այլ եւս չպիտի առաքեմ բանաստեղծ առ Ռուս ժողովուրդն»։

Այսպէս սուրբ զայրոյթով սրտմտած կը խօսէր հայրենեաց վշտի երիտասարդ թարգմանը։ Նիկողա Կայսեր կը սիրէր Բուլքինն եւ մահամեծ բանաստեղծին դրած էր թէ կ'ապահովէ նորա կնոջ ապագայն, եւ սակայն այդ սէգ պաղատանքն անհաճոյ թըւեցաւ իրեն։ Հարցուց թէ ո՞վ էր այդ օտանաւորաց ստորագրողը։ Պատասխանեցին թէ «մի ոմն»։ Միխայիլ Լէրմոնով, երիտասարդ սպայ կայսերական թիկնապահ գունդին մէջ, եւ որ արդէն նշանաւոր հանդիսացած էր իւր յանդուգն լեզուաւ եւ խնդրիտ բնավորութեամբ։ Կայսրը գրիչ մը առաւ եւ ստորագրեց հրաման մը որով Միխայիլ Լէրմոնովը կը զրկէր ծառայել Կովկասու բանակին մէջ։ Աքսոր մ'էր։

(Կը պատմեն նաեւ թէ՛ աքսորանաց պատճառ եղած է մենամարտութիւն մը Հոլանտայի դեսպանին հետ)։

Բ.

Քսան եւ վեց տարեկան էր Լերմոնով երբ աքսորեցաւ ի Կովկաս։ Կերթար ուրեմն, ի հարկէ ստիպեալ, ապրիլ այն երկնից ներքեւ զոր սիրած էր այնքան։ Կովկասու նուաճման տաքնասպալից տարիներն էին. իբր Ռուս սպայ Լէրմոնովը պարտական էր մարտնչիլ ընդ դէմ թշնամոյն, բայց բանաստեղծը կը մոռնայ հայրենիքն ալ, կը մոռնայ քաղաքականութիւնն ալ, զմայլած ի տես այն քաջերու որք չէին եւրոպական ասպետներ, այլ, վայրենի դիւցազունք, կը մեռնէին իրենց լեռներու, իրենց իրաւանց ի պաշտպանութիւն։ Երիտասարդ սպայն յափշտակուած, բորբոքուած, փոխանակ ջարդելու լեռնականներն անխնայ, անյագ կ'երգէ նոցա փառքերը։

Պէտք է խոստովանիլ թէ կը խանդավառէին նորա ոգին ոչ միայն Կովկասու լեռ-

նականներն այլ նաեւ նոյն իսկ իւր զինակից սպայներն։ Յանդուգն, խիզախ, կրակոտ սպայներ էին դոքա, ոմանք յօժարակամ դիմած ի Կովկաս. հմայեալ նորա վեհութենէն, այլ շատ սէգ, ատ խորխոր ի Բեդեքապուրի, աքսորուած էին անդ որպէս զի խոնարհին ի խիստ կարգապահութիւն, եւ Լէրմոնովը կը սիրէր այնպէս իւր արի զինակիցներն որպէս արի լեռնականները։

Վսեմ երգով մը ողջունեց Կովկասը. «Ողջո՛յն քեզ սպիտակափառ Կովկաս, վայրենի ես դու, այլ քանիօ՞ն դեղանի»։ Ողջունեց նորա աղբիւրներն, աքսորուածն որդիքն։

«Վայրագ եւ վայրագաստն անգնդոց զաւակները, կուռոյ մէջ կը ծնին, կուռելու համար կը մեծնան. պատերազմի մէջ կուգայ մանուկն յաշխարհ, պատերազմելով մարդը կը հասնի իւր վախճանին։ Կարգախօս մը եւեթ ունին, թշնամին, ռուսը։

«Իւր ծնդոց վրայ մանկիկն առած սուրբ ատելութիւնը կը շնչէ նմա մայրը։ Մահուին անգամ, տկար մանուկն անգամ չը գլխոտը դթութիւն։ Հաւատարմի ի բարեակամութեան, հաւատարմագոյն են ի վրէժ։ «Անդ շթափիր կաթիլ մ'արեան այր վրէժն ւանդէն եւ անդ չլուծուի։ Բայց սէրն ալ, խնջպէս ատելութիւնը, սէր մ'է որ ո՛չ չափ կը ճանաչէ ոչ սահման»։

Աղետաւոր տեսարաններն են զոր բանաստեղծն ի հանդէս պիտի ածէ եւ արդէն իւր առաջին խօսքերովը կ'արգարտեցնէ իւր դիւցազններն, Ռուսաց անհաշտ թշնամիներն։ Անիրաւ են նոքա որք կուգան Կովկասն ընկճել իրենց լուծին ներքեւ։ Ո՛չ ապաքէն յանդիշտակ ժամանակաց անտի լեռնականացն են լեռն ու հեղհեղատն։ Առաջին քան Ռուսը ի Կովկաս։ Կը գոռայ գետն Թէրէք, ատելով կ'առէ զօտարը։ Եւ ծովը Կասպից հրճուելով կը մռնչէ երբ մեծ գետը նուէր բերէ նմա մոսկովեան դիակները։ Լէրմոնովը տարօրինակ երգերով կը ներկայացնէ բնութեան դաւադրութիւնն ընդդէմ Ռուսաց։

Կազպէի խիւճերէն ժայթքած թուալեղով կը խոյանայ Թէրէք ապառաժներու մէջէն. յանդուգն կը գահալիժէ իւր ջուրերը. սահանքներ են, փոփրակից կոհակաց մանչիւնք, գողցես վայրացն է ոգի որ կ'արձակէ պատերազմի աղաղակն ընդդէմ թրշնամույն. բայց մտնելով ի գաշտապետին, այլ եւս կը հանդարտի եւ երբ կը հասնի ի ծովը Կասպից, կ'ըսէ նմա։

«Բա՛ց իմ ալեացս ծոցդ հիւրընկալ, տես նուէրներն զոր քեզ ածեմ։ Պարիէլի կիրճերէն անցայ, կրանիդի հատորներ խլեցի որպէս զի անոնցմով զաւակներդ զբռնուն»։

Բայց ծովը անշարժ կը մնայ, իբր ի բուն. այդ չէր նուէրն ում կ'սպասէր։

—Ա՛ռ մի այլ նուէր, որ թրեւս հաճոյ լինի քեզ, կը կրկնէ գետը. դիակն է երիտասարդ չէրքէզի մը, Քապարտայի երիտասարդ դիւցազնի մը. մեռաւ նա մարտնչելով ընդդէմ Ռուսաց։ Մեծագնի է նորա զրահն, եւ ծալ ծալ ի հով իւր տառապոյի շուրջն հիւսուած են Ղարախին տունները։ Տես դեռ տակաւին կը փայլի յաջս նորա հուրն ատելութեան։

Բայց ծովը անշարժ կ'սպասէ նուէրին զոր կը պահանջէ։

—Ահա՛, կ'ըսէ Թէրէք, այժ անգամ գոհ պիտի մնաս. դիակը զոր կը գլորեմ իմ ալեացս հետ մարմինն է երիտասարդ Պոպաք կնոջ մը։ Տես, ի՞նչպէս գեղեցիկ է նա, ի՞նչպէս ասկեպիտակ երկայն իւր մաղբըրը կը

քօղարկին իւր գոհատ ուսերը: Նայէ՛, կուրծքին վրայ փոքրիկ ճեղքը տես, դաշոյնի ճիշդ չափն է: Կարմիր արիւնը դեռ կը կայլակէ վէրքէն: Կրէպէնի ահագոյն Գողաթը կը սիրէր զնա, եւ նա իսկ այլ եւս չարտասուէր: Աշտանակեց Գողաթն իւր ձին եւ սալամբօսի թռաւ ի մէջ գիշերոյն եւ մթին: սուրաց սլացաւ չեղքէզներուն վրայ եւ ինկաւ, դաշոյնն ի սրտին միտում:

Կը լռէ գետը, իւր մթագին ալեաց վըրայ կը բարձրանայ երեւոյթ մը: Գողաթ կնոջ դիակն է: ի տես այդմ՝ կը ցնծայ ծովը, խեղուծեան մահչիւն մը կ'ոտնու իւր անդունդներէն, եւ կը բանայ իւր ընդարձակ ծոցն ընդ ունեւր թէրէքի ակիւններն:

Այս ահեղ տեսարաններու քով բանաստեղծը կը նկարագրէ գողար ու սրտածմիրկ տեսարաններ: Կը գթայ նա խեղճ Գողաթներու վրայ ոյք լեռնականաց դէմ ջարդ ու կոտոր կը լինին: Գողաթ կին մը կ'օրօրէ իւր նորածին մանուկը: Խեղճ կին, տխուր է, բայց ախարարտ: Արիւնակից տեսարաններ կը ներկայանան իւր երեւակայութեան տառաջ եւ սակայն որպիսի հանդարտիկ քաջութեամբ, համակերպեալ քաղցրութեամբ կը վարժեցնէ զուսկն այն կենաց որ նմա կ'սպասէ, կեանք պատերազմի եւ վտանգաց: Ահա՛ նորա երգն զոր արդէն 84 Ապրիլի Օրհնան Կեանքի մէջ յիշելու տալիքն ունեցած եմ:

«Քնացի՛ր, մանկիկ, հանգի՛ր խաղաղ, Քնացի՛ր, զաւակս, քնացի՛ր: — Երկնից երեւոյն, լուսնակն հանդարտ, օրօրօցիկ վրայ թռչող է: Երբ մը քեզի պիտի երգեմ ահա՛ կենդանի եթէ խօսեմ: — Աղբոր պատմութիւն մը քեզի պիտի պատմեմ թէ որ քեզմանս: — Քնացի՛ր, մանկիկ, հանգի՛ր խաղաղ, քնացի՛ր, զաւակս, քնացի՛ր:»

«Անդ ուր թէրէքն, ապառաժներու վըրայէն մահչելով կը սուրայ ձորերու մէջ, զարանակալ նստած է հոն Ձէչէնը: — Գետինն է ծռած եւ կը օրէ իր դաշոյնը: — Եւ սակայն այդ պատերազմներուն մէջ ձերացաւ հարդ, ու միշտ իրեն հետ է երկիրքն: — Քնացի՛ր, զաւակս, քնացի՛ր:»

«Գուն ալ, պիտի գայ այդ օրն, զուն ալ պիտի երթաս պատերազմելու: — Հըրացանը ձեռքդ ձի պիտի հեծնես, հեռու պիտի երթաս քու մօրդ խրճիթէն: Քեզ լերփներանգ մետաքսէ պիտի հիւսեմ զգետն մը, իմ ձեռքովս պիտի հիւսեմ: — Քնացի՛ր, զաւակս, քնացի՛ր, հոգւոյս գանձը:»

«Գուն պիտի լինիս յանդուգն Գողաթ մը, արտիկ խորէն յանդուգն Գողաթ մը: — Այն, երբ տեսնեմ քու մեկնիլդ, երբ մնաք բաժնի վերջին նշանը տաս ինձ, ինչքան զգաւն արցունքներ-պիտի թափեմ: — Ինչ տխրութիւն պիտի պատէ: — Պէտք է ձեռքերդ խօսեմ, քնացի՛ր, զաւակս քնացի՛ր:»

«Այն ստեն, բնանամ թէ արթուն ըլլամ, առտու ըլլայ թէ իրիկուն, անդա՛հար քու վրայ պիտի մտածեմ: — Չպիտի ճունենամ ուրիշ միտիմարութիւն, բայց միայն ազօթել: — Ամէն վայրկեան պիտի

զըսեմ, ո՛ւր է հիմա տղաս, ի՞նչ կ'ընէ: — «Քնացի՛ր, տղաս, դեռ անհոգ ես օրօրօցիկ մէջ, քնացի՛ր, զաւակս:»

«Քեզ պիտի տամ սուրբ պատկեր մը որ ճամբան քու ընկերդ ըլլայ: — Առջիկ պիտի ագնես զայն երբ ազօթես Աստուծոյ: — Շեռու երկիրներ, պատերազմի միջոցին, միշտ պիտի մտածես մօրդ վրայ: — Քնացի՛ր, պղտրիկս, քնացի՛ր, զաւակս, քնացի՛ր իմ տղաս:»

Այսպէս, Լէրմոնզովի, ռուս բանաստեղծին, ռուս սպային խանդն ու սէրը բորբոքեալ շեն վասն «Առէ՛ք Ռուսից» և Այլ թող նա՛ սիրէ Կովկասը, թող նա՛ պաշտէ նորա լեռնականներն որքան սիրտը սահման կուտայ նմա, հարկ է որ առնու սուրն ու հրացանն եւ երթայ կոտորել իւր սիրելի Ձէչէններն ու Ձէրքէզները:

Բայց երբ կը դառնայ մարտէն, երեւակայութիւնը բորբոքում արիւնայեղց տեսարաններէ, յալիւտակուած բարոյական արութեան, առնական կորովոյ այնքան հանդէսներէ, կը հարցնէ ինքնին. «Ո՞ր ի՞նչ օգուտ այդքան հրաշալիք քաջութեանց, եւ կ'սկսի անիծել պատերազմը: Լէրմոնզովի տխրամտ օգին ի յայտ կուգայ այն հիւնայի բանաստեղծութեան մէջ որ կը կոչուի ՎԱԼԵՐԻՔ եւ հիանալի նկարագիրն է պատերազմի մը:

Վալէրի՛ք նիւթն է: — Լէրմոնզով ու իւր զօրքերն ի ճամբարին են, յանկարծ նոցա վրայ կը նետուին Շամիլ ու իւր Քեքեքներն: Ի զէն կը դիմեն Ռուսը եւ մացառէ ի մացառ հալածական կը վարեն թշնամին, բայց ահա թափաղղի մը մէջ կ'իյնան: Ձէչէնք ոյք ի փախուտ զառնալ թուէին, պնդափակ կը սեղմեն ռուսներն հոյ եւ երկաթի չըջնակի մը մէջ: Արտիկի մարտ, որպիսի՛ կտտաղութիւն, քանի՛ ահեղ հարուածներ: Եւ բանաստեղծն ի հանդէս կ'առնէ վեհապանծ օճով մը զխցաղնութեան տեսարանները: Սիրտ յօշոտող, սարսուռ ազդող գէպերը միմեանց կը բաղխին: Այդ մարտին մէջ Ձէչէնք պարտեալ դուրս կ'ելնեն եւ երբ Ռուսը կը թաղեն իրենց անկեալ ընկերները, Լէրմոնզով կը հարցնէ թաթարի մը ո՛ւր են, ի՞նչ է անունն վայրին ուր կը գտնուին:

— Վալէրի՛ք, կը պատմաստանէ թաթարն, անուն մը որ մեր լեզուաւ կը նշանակէ «հաւան քեպը»: (Շարունակել) Ա. Ա.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔ

ՀՈՅ ԳԻՒԴԱՅԻՆ ԿՐՕՆԱԿՈՆ ԿՈՂՄԵՐԸ

Վարդապետական գոյներ, գաղղոյական դրութիւններ չենք՝ գտներ մենք մեր գիւղացիներու կրօնական ըմբռնումներու մէջ. անոնց ամեն բանը պարզ է ու սուրբ, ազգային ու նուիրական:

Հայ գիւղացիի կրօնական մեծ միտքն Աստուծոն է. իր բոլոր հաւատարմութիւնն անոր մէջն է Աստուծոյ վերաբերութիւնով, որ եօթներորդ երկիրը կը գտնուի, ու ամեն բան կ'ընէ նա, բարին՝ իր ողորմութեան համար, չարն՝ մեր մեղքի համար:

Ինչո՞ր դիմէ վեր է, երկիրք է, ու երբ

կինք ու Աստուած փոխաբերութիւնով մը շատ ատեն մէկ բան կը հասկնան մեր գիւղացիները. բայց Աստուծոյ բնականապէս կը համարին իսկապէս երկիրքն, ու անոր կապուածութիւնն ալ ծով մը. քիչ մը շովիտութիւն ալ կ'ընեն ու իրենց երկիրքի մէջ կը փնտռեն իրենց բուն Աստուածը:

Արեգակը չեն պաշտեր, բայց պաշտելու տեսակի մօտ բաներ ալ կ'ընեն մեր գիւղացիները. գուրգուրանքով, սրտի ամբողջութիւնով մը կը բարեւեն անոր ծագումն ու կը խաչակնքեն զիրենք ու կ'աղօթեն. Արեւորդիներ ալ ունէին արդէն հին Հայերը:

Լուսինը կը յարգեն, երբ նոր է, գրեթէ կը պաշտեն. առջի անգամ զայն տեսնելու օրը կը խաչակնքեն զիրենք ու կը զգուշանան որ գէշ անձի մը երեսը չնային այն ատեն: Անոնք որ թաքուն խոտովանեցներ ու սրտի դաշտէն ունին, լուսին կ'աղօթեն. շատերը կը կարծեն արդէն, տարբեր է իրենց երկրի բուն լուսինը:

Աղօթք, սրտի ու մտքի վերացումն կը գործածեն մեր գիւղացիներ իրենց երկնային պաշտամունքի մէջ, խուկ ու մոռ զոհ ու նուէր երկրային պաշտամունքի մէջ նիւթ, թանձրացում ալ պէտք է երկրի վրայ:

Շատ կը յարգեն, Աստուծոյ մօտիկ կը նկատեն եկեղեցականներն ու բարեկրօն անձերն, մանաւանդ երբ մեռեմ են, ու սուրբի, կոյսի, ճգնաւորի մը անունն ունին նոքա երկրի վրայ. ու խոտաւորի կ'ընեն անոնց գերեզմանագրերն ու մեծ ու փոքր զոհաբերութիւններով կ'այցեցնեն զանոնք:

Սուրբի մը ամեն բանը նուիրական կը համարին մեր գիւղացիներն, այսպէս՝ Ս. Սարգսի ձին, Ս. Կարապետի ջորին, Փոթի Ս. Գէորգայ աքաղաղն, ու ի՞նչ է Սարգսի անկիւնը:

Անուշաւանը չեն ճանչեր մեր գիւղացիները, բայց իրենց անտառիկներ ու մացառագետներն ունին, որք հին Աստուծոյ սինները կը յիշեցնեն մարդու. այս սրբափայտերը չեն կտրեր անոնք, չեն գործածեր ամենեւին, անոնց պտուղներն ալ կ'ուտեն, բայց տները չեն տանիր:

Չուրը սուրբ է կ'ըսեն մեր գիւղացիներն, օրովհետեւ կը սրբէ, կը մաքրէ մեզի բայց կրօնական գոյն մը կուտան ջրի մը երբ զարման, սուրբ անցը կամ անուն մը կը տեսնեն անոր մէջ. Յոյն ապաղայի ճիշդ նշանակութիւնը չունի մեր գեղջուկ Հայերու սրբաջուրը:

Քարեր ու ժայռեր ալ ուխտատեղ կ'ընեն մեր գիւղացիներն ու սուրբ կը համարին զանոնք, երբ ոյժ, գաղտնիք կամ սուր յիշատակ մը կը կարծեն որ ունին անոնք տգիտութիւնը կարծիքներ արտադրել երբեմն, ու սովորութիւնն ալ քիչ քիչ վարդապետութեան վերածեր է մեր մէջ այդ կարծիքներն:

Մեր գիւղացիներու կրօնական մտքերը վերլուծելով մարդ կը տեսնէ որ՝ այն բանը կը պաշտեն անոնք, որոց մէջ գաղտնիք մը ոյժ մը կը նկատեն. կրօնքի բոլոր նշանակութիւնն ալ անըմբռնելի գաղտնիք ու յուսահետական զօրութիւն է. մենք կը տեսնենք, այո՛, որ իրենց երկիրքն ու երկիրը պաշտեն մեր գիւղացի Հայերն, ու երկիր մը բնիկ ըլլալու բոլոր արժէքն այն է, իր հայրենի երկիրքն ու երկիրը պաշտէ մէկը, իր հայրենի հող ու ջուր, իր սար ու ձորը:

Կրօնական ու ազգային են մեր գիւղացիներու վարմունքն ու ըմբռնումներն ու ճիշդ ու նուիրական:

ԵՐԵՒՈՅԹ

Իմ յանդիման բարձրանում էր
Մի վիթխարի խորիմ լեռ,
Նրա գագաթը ողջ թաղվում էր
Ամպերի տակ անվահեռ:

Նեղ շաւիղով խորխորակում
Եւ քայլերով անհաստատ
Ճգնում էի բոլոր ոյժով
Նշել վերը մթադնապատ:

Սակայն ոյժըս պակասում էր,
Շունչըս կտրվում անդադար,
Ողջ կոկորդըս չորանում էր,
Սիրտըս տրոփում սաստկարար:

Տանջվում էի ու չարժարվում,
Արցունք հոսում աչքերից...
Օ՛ մութ գագաթ, ինչո՞ւ խորում
Նրկին թաղում ես ինձինց...

Եւ ես տըքում, յուսահատվում,
Գոչում էի ցաւադար,
Ձեռներս էի խիստ կտրատում,
Տալիս անէծք ինձ վատթար:

Կըրկին նոր ջանք, կըրկին նոր ճիգ
Բարձրանալու դէպ ի վեր,
Բայց զարնեցայ գետնին սաստիկ՝
Ծանրացած ինչպէս բեռ...

Եւ ես պառկած էի ցաւով
Հըսկայ լեռան ստորոտում,
Եւ սեւ միտքեր անվերջ շարքով
Նեղվում էին իմ գըլխում...

Սակայն ահա՛ իմ ակնշիւն
Խուճ ճիգ աղմուկ զարնեցաւ,
Այնտեղ կար լաց, ճիչ սըրտադին,
Կոծ, աղաղակ, ձայն ու ցաւ:

Դա՛ եղբայրներս իմ հարազատ
Լերան միւս կողմն են ընկած,
Խեղճ, վիրաւոր ու յուսահատ,
Թըշուտութեան մէջ թաղուած:

Եւ երակներս իմ լարուեցան,
Եւ ողջ մարմնով ցնցուեցայ,
Աչքերս կրակով փայլալընցան,
Կուրծս ուռեցաւ—վեր ելայ...

Անպէ՛տք դու որդ, զարնուի՛ր կըրկին
Թաւաղըդըս հողին սեւ...
Ո՛չ ոյժ, ո՛չ կամք քո խեղճ սըրտին
Բնութիւնը չէ՛ տուել պարգեւ...

Սակայն յանկարծ փայլակ սլացաւ
Ամպերի մէջ անչեղ, մութ,
Դաղացին նրանք... եւ քերեցաւ
Ինձ մի պայծառ երեւոյթ:

«Կա՛ց»՝ հրամայեց գեղահընչիւն
Եւ կուսական նա ձայնով,
Յաւեց դէմքն նայեաց փառվառն,
Տո՛յց տուեց գագաթը մատով—
Եւ իմ աղկար հոգիս լեցրաւ
Դիւցազնական գոռ կամքով,
Եւ խեղճ փրաքս կենդանացրաւ,
Եւ նրան լեցրեց ջերմ սիրով,
Եւ առեց մտքեր ինձ գեղ, վրսեմ,
Եւ ցնորքներս սիւսեց նրսեմ,
Եւ փայլ յոյսեր պարգեւեց,
Եւ կուրծս՝ յոգնած վտից դժխեմ
Ազատ ջնջով զուարթացրեց,
Եւ ոյժըս ինձ վերադարձրեց,

Եւ ինձ համար անուրջներ
Սքանչաժարիտ բերաւ նուէր,
Եւ ճակատըս լուսով սփռեց,
Եւ զողացրեց իմ շրթներ,
Եւ հրաշալի, հրապարտ, արդար
Խօսքեր, մտքեր ու ձայներ
Նրանցից հոսել սկսան գեղաբար...
Ողջո՛յն, նպատակ ու գործեր...

Այդ ժամանակ երեւոյթը
Սկսաւ բարձրանալ շաւիղով,
Եւ դէպ իրեն, դէպ գագաթը
Ինձի արեց իր մատով:

Եւ ես ընկայ սրտաբաբախ
Նրան հետեւել միշտ, անկանգ...
Նշում էի անվրտանգ...
Նրկուսըս էլ հէգ ու անվախ
Ամպերի տակ թաղուեցանք...

ԼԵՌԵՆՑ

ԱԶԳԱՅԻՆ ՏԻՊԱՐ

Անգլիացիների Ջոն-Բուլլ, ֆրանսացիների Պրիւ-
դոմ, ուսանելի կուզմա-Պրուսոյի և հայերի կերա-
կոսեան.— Ընտանիքը.— Հասարակական գործիչներ.
— Արկածախնդրութիւն.— Ձգտում գեղի անծա-
նօթը, անյայտը, հեռաւորը.— Մայրենի լեզու.—
Թատրոն.— Լրագիր.— Եկեղեցի և օտարազգի մի-
սիոնաւները.— Հետաքրքիր տեղեկութիւններ.—
Գիւղացիներ.— Կարմրամորթ հնդիկներ.— Միւրաւո-
ւ.— Բազէն.— Մալաբարի.— Բիւսմարկ.— Բուլանթէ.—

Ինչպէս անգլիացիների ընդ հանուր բուր-
ժուազական ախլը Ջոն-Բուլլն է, ֆրանսա-
ցիներինը՝ Պրիւ-դոմ, իսկ ուսանելիները՝ Կուզ-
մա-Պրուսոյի, — այնպէս էլ հայերինը կա-
րելի է համարել պարոն Անգլոստեանին:

Կիրակոսեան ունի լաւ տուն, լաւ ըն-
տանիք, — բայց երբէք տանը չէ նստում:
Ամբողջ առաւօտը նա գործումն է գտնը-
վում, զլխաւորապէս առեւտրով է զբաղ-
ված, իսկ երեկոյեան կլուբումն է, որտեղ
թուղթ է խաղում: Ընտանիքում նա անց-
նում է միայն մի քանի ժամ, այնքան որ-
քան հարկաւոր է հաց ուտելու ու քնելու
համար: Դուրսը նա միշտ զբաղված է, նոյն
իսկ լաւ արամադրված, հանաւէ է, — իսկ
տանը միշտ վատ տրամադրված, բարկաց-
կոտ, ամեն քանից անբաւական, իր կնոջ
ու երեխաներին ամեն չնչին բանի համար
միշտ յանդիմանութիւն անող:

Կիրակոսեան գեղեցիկ, պատուական
կին ունի, —բայց ընկած է միշտ ուրիշ կա-
նանց ետեւից: Նա շատ լաւ որդիք ունի,
—բայց միշտ գովում է իր ընկերոջ որդկե-
րանց, իսկ իր սեփական որդկերանց ճըն-
շում, հալածում է, նրանց կեանքը դառ-
նացնում, անտանելի է դարձնում: Բայց
երբ որ որդկերանցից մէկը մեծանալով, որ
եւ է բանով օտարութեան մէջ քիչ թէ շատ
յայտնի է դառնում, —այն ժամանակ Կի-
րակոսեան հպարտանում, վերվում, պար-
ծենում է որ իր որդին յայտնի Ժարդ է
դարձել: Եւ է այդ նոյն պարին նոյնքան
յայտնի դառնալ իր երկրում, իր քաղա-
քում, հոր աչքի տակ, —Կիրակոսեան գու-
ցէ այնքան չէր էլ պարծենայ, այլ կը սկը-
սէր նոյն իսկ նախանձել իր որդուն:

Կիրակոսեանի յատկանիշներից մէկը՝
սարսափելի նախանձ է: Իր համաբազա-
ցիներին մէջ նա ոչինչ արժանաւորութիւն
չէ գտնում և հաւատացած է որ ինքն ա-
մենքից բարձր, ամենքից խելօք, ամենքից

հանճարեղն է: Երբ որ իր հայրենակիցներին
չըջանում մէկը յայտնվում է, որպէս նշա-
նաւոր հասարակական գործիչ, Կիրակոս-
եան ամեն կերպ աշխատում է նսեմացնել
նրա նշանակութիւնը, անտես առնել նը-
րան, որպէս հասարակական գործիչին,
անտես առնել պզգին նրա մատուցած ծա-
ռայութիւնները, նոյն իսկ եթէ միջոց ու-
նի՝ վիսակել նրան, հալածել, խապառ ոչըն-
չացնել նրան...

Բայց ասեցէք նրան որ այս ինչ կամայն
ինչ օտար երկրում մի նշանաւոր մարդը՝
Հայ է եղել, — և կը տեսնէք որ նոյն Կի-
րակոսեան, որ իր տանը ճնշում էր կնոջը և
երեխաներին, հալածում էր իր հայրենա-
կիցներին մէջ յայտնվող տաղանդաւոր գոր-
ծիչներին, — անասելի կերպով կ'օրախա-
նայ, աննկարագրելի հրճուանք վը գգայ ի-
մանալով որ Նապոլէօն առաջինի երեւելի
զօրապետ Մէ-բապ հայ է եղել, Մալաբարեան
անուով, որը ծնվել է Ասորականում եւ
այնտեղից փախել գնացել է Ֆրանսիա, որ
Ասորիայի նախկին պրէմիէր-մինիստր Անթ-
ուէն Գալաթի հայ է եղել և նրա իս-
կական տգեղանունն է եղել Անթուէն, որ
Գիւլայիւրէ վայրենի ցեղը, որ այժմ Աւզա-
նիստանի էմիրի դէմ է ապստամբվել, բուն
հայեք են...

Կիրակոսեանի համար ամեն բան ինչ որ
իրը չէ, ունի մի առանձին դիւթական,
գրաւիչ կերպարանք: Կիրակոսեան սիրում
է անյայտը, անծանօթը, նա ի բնէ աշխ-
տեցէ՛ք է, արկածախնդիր է: Իր հայրենիքը
իրան յայտնի է եւ այլ եւս ոչինչ գրաւիչ
ոյժ չունի նրա համար: Բայց նրան գրա-
ւում է անյայտը, անծանօթը, — եւ ահա
մեր Կիրակոսեանները դարերից ի վեր ան-
դադար գաղթում են ու գաղթում դէպի
անյայտ, անծանօթ հեռու երկրներ: Նրան-
ցից մեծ մասը այնտեղ կորչում, անհետա-
նում են, — բայց ի՞նչ փոյթ...

Ինչպէս որ Կիրակոսեան ունենալով
պատուական եւ գեղեցիկ կին, գրաւվում
է միշտ ուրիշ կանանցով, այնպէս էլ ունե-
նալով հարուստ եւ գեղեցիկ մայրենի լե-
զու, այդ լեզուով երբէք չէ խօսում, օ այլ
միշտ աշխատում է որ եւ է ուրիշ լեզուով:
Թէեւ մեծ մասամբ անողորմաբար կտոր-
տում է այդ լեզուն: Իր ընտանիքին էլ
ստիպում է խօսել այն լեզուով, որ նրա
մայրենի լեզուն չէ: Եւ այդ այն պատճա-
ռով որ առանձին սէր ունի դէպի օտարը,
անյայտը անծանօթը: Մայրենի լեզուն հօ՛-
յայտնի է իրան թէ ինչ բան է, իսկ այն
ամենը որ յայտնի ու ծանօթ է Կիրակոս-
եանին, ոչինչ գին չունի նրա աչքում: Նրա
աչքում գին ունի միմիայն այն, ինչ որ ան-
ծանօթ է իրան...

Կիրակոսեան վերցնում է Հայոց Թատ-
րոնի աֆիշան եւ կարդում է: Աֆիշայի վը-
րայ գրուած է «Պէշաք» կամ «Օրիորդ Բե-
րոյեանց»: Դրանք Հայոց ժամանակակից
կեանքից վերցրած պիէսաներն են, —եւ
Կիրակոսեան դէն է գցում աֆիշան եւ չէ
գնում թատրոն: Գուցէ նա իր կեանքում
դեռ չէ էլ տեսել երբէք այդ պիէսաները,
բայց բաւական է որ նրանց նիւթը վերցը-
րած է հայերի ժամանակակից կեանքից,
որպէս զի նա չը գնայ...

Ինչ որ յայտնի է Կիրակոսեանին, իրան
չէ հետաքրքրում, նա ձգտում է դէպի ան-
յայտը, անծանօթը: Եւ ո՞վ գիտէ՝ գուցէ

այդ «Պէտք»-ի եւ «Օրհորդ Բէրօյեանց»-ի մէջ կ'ընդունուին իրենց կայ ժամանակակից Հայոց կեանքի վրա, նոյն իսկ իրան Արարկոսեանի վրա: Իսկ կրիտիկա, քննադատութիւն Արարկոսեան ամենից շատ է ատուում, խորշում է կրիտիկայից ինչպէս չար սատանայից...

Բայց երբ որ թատրոնում այնպիսի պիէտաներ են, տալիս, որտեղ ոչինչ անարկուծ իւր չը կայ Հայերի ժամանակակից կեանքի վրա, ուրեմն չէ էլ կարող լինել որ եւ է անարկուծ իւրան Արարկոսեանի վրա, մի եւ նոյն ժամանակ ներկայացվում է մի որ եւ է անցը կամ հին, անցած ժամանակներից, օրինակ Հայոց հին պատմութիւնից, կամ եւրոպական, իր համար անյայտ, անծանօթ կեանքից, մանաւանդ երբ բնակ վրա գուրս են գալիս թագաւորներ, թագուհիներ, պալատականներ, — թատրոնը լի է լինում Արարկոսեաններով: Արարկոսեան երբէք տուի՞ չէ ունեցել տեսնել պալատները՝ թագաւորներով, թագուհիներով, իշխաններով, — եւ ահա այդ անյայտ, անծանօթ տեսարանն է որ գրաւում է իրան: Նա հօ չէ հասկանում պիէտայի միտքը, բովանդակութիւնը, օրինակ «Համէտ» հօջակուոր պիէտան, — բայց նրան գրաւում են իշխանները, պալատը, շքեղութիւնը, թագաւորը եւ թագուհին գահի վրա նստած, յետոյ սպանութիւնը, թոյնը և...

Արարկոսեան վերցնում է հայերէն լեզուով հրատարակվող մի լրագիր: Կարդում է: Այն յօդուածները, որոնք խօսում են տեղական, ներքին հարցերի, թէկու՞ղ տընտեսական նշանաւոր հարցերի վրա, — նրան ամենեւին չեն հետաքրքրում: Բայց նրան հետաքրքրում է անյայտը, անծանօթը, գրաւում են մեծ մեծ եղելութիւններ, օտար երկիրներում պատահած քաղաքական խոշոր անցքեր: Նա սիրում է կարգալք քաղաքական մեծ անցքերի վրա ծակ փրկիստփայտ թիւններ անող և քաղաքական հարցեր վճռող անրովանդակ յօդուածներ եւ այնուհետեւ ինքն սկսում է սխալ եւ ծուռ կերպով վիճել այդ հարցերի վրա, որոնց բուն իմաստը չէ էլ հասկանում, սկսում է խօսքով վճռել տիեզերական հարցերը...

Իսկ հայերի նկատմամբ, նրան հետաքրքրում են միմիայն այն հայերը, որոնք գտնվում են իրանց հայրենիքից շատ հեռու: Նա հետաքրքրութեամբ կարդում է մի յօդուած՝ Ամերիկայում գտնված մի փոքրիկ խումբ հայերի մասին, կամ հերձվում, զմայլում է իմանալով որ հեռու Աւգանիստանի քիչաւ կոչված ցեղը հայ են եղել, և...

Արարկոսեան իր տան և իր հասարակական յարաբերութիւններում միշտ Արարկոսեանների հետ երբէք հայերէն չէ խօսում: Իր կնոջ և երեխաներին մինչև անգամ արգելու է մայրենի լեզուով խօսել, — բայց շատ ուրախանում է երբ արտասահմանում մի գիրք է հրատարակվում, որտեղ գտնվում, բարձրացնում են Հայոց դրականութիւնը ու հօջակում Հայոց լեզուն: Արարկոսեան ինքն սաստիկ արկածասէր, իրն է ավանտյուրիստ լինելով, կօպէկի տեղ չէ գնում մայրենի հողը և միշտ գաղթում է, գաղթում՝ ուրիշ, հեռու երկրները, պատրաստ է գնալ Աւգանիստան, Հընդ-

կաստան, կամ Ամերիկայի կարմիրմորթ հնդկների մօտ, — բայց զգացված սրտով, արտասուքը անքերին կարգում է այդ տեսակ Փրազաները: «Հայերը որտեղ էլ լինէին, միշտ հաւատարիմ են մնում լուսաւորչական եկեղեցուն»:

Երբ Արարկոսեան իմանում է որ կաթօլիկ ու բողոքական միսիոնարների պրօպագանդան քանի գնում է տարածվում է հայերի մէջ, — նա փոփոխը բերանին սկսում է բացականչել՝ «պէտք է խեղդենք, ջախջախենք, ոչնչացնենք մեր Հայոց լուսաւորչական եկեղեցուն այդ թշնամիներին», եւ ի հարկէ այդ իր արդար զարդով յայտնում է ոչ մայրենի լեզուով, այլ ուրիշ որ եւ է լեզուով, բայց ինքն անհոգ նստած է և կոյր ու խուլ է ձեռքնում իրան երբ իմանում է թէ նոյն Հայոց, լուսաւորչական եկեղեցուն մայր-աթոռ, ամբողջ հայութեան հոգեւոր կենտրոնը, լուսաւորչական եկեղեցուն որբաւայր էջմիածինը, իր բոլոր շինութիւններով, իր եկեղեցիներով, իր վեհարանով, իր ճեմարանով՝ քանդ վում, քայքայվում է եւ այս րօպէիս ուրիշ ոչինչ չէ ներկայացնում, եթէ ոչ աւերակների, փլատակների մի ահալին կոյտ...

Իւ որովհետեւ Արարկոսեանին երբէք չէ կարող հետաքրքրել իրանը, ներքինը, սեփականը, այլ նրան հետաքրքրում է միայն հեռաւորը, օտարը, անհասկանալին ու անծանօթը, որովհետեւ բացի սրանից նրա ուրախութեան, հրճուանքին չափ չը կայ, երբ նա իմանում է թէ այս ինչ օտար ցեղը, այն ինչ օտար երեւելի մարդը՝ հայեր են եղել, — ուստի ես էլ ուզում եմ ուրախացնել այդ Արարկոսեանին և պատմել նրան հաստատ աղբիւրներից հաւաքած հեռաւոր հետաքրքիր տեղեկութիւնները, որոնք, յոյս ունեւ, կը լցնեն բոլոր Արարկոսեանների սրտերը աննկարագրելի հրճուանքով:

Հաստատ աղբիւրից իմացայ որ ոչ թէ միայն Աւգանիստանի քիչաւ կոչված ցեղը հայեր են, բայց և Բիւսանիայի բնակիչները, Արիսիայի բնակիչները, և նոյն իսկ Ամերիկայի կարմիրմորթ հնդկները՝ հայեր են եղել: Բայց թէ ինչ պատճառով այդ վերջինների մօրթի գոյնը կարճէլ է, — այդ շատ պարզ ու հասկանալի է. նրանք կարմրել են ամօթից, նախ որ այդքան հեռու են գտնվում իրանց հայ հայրենիքից եւ երկրորդ որ զգում են թէ Ամերիկայում միակ ներկայացուցիչներն են հին Հայաստանի, մնացած լինելով մի և նոյն ժամանակ նահապետական, վայրենի դրութեան մէջ, կատարելապէս քիչ ու քիչ՝ Ամերիկայի զորագրած և քաղաքակիրթ ազգերի շրջանում:

Բացի սրանից կարող եմ հաստատ աղբիւրներից հաղորդել եւ ուրախացնել Արարկոսեաններին սրտերը, որ Նապօլէօն առաջինի երեւելի զօրապետ Յէբաթ (որ վերջը դաւաճանել է Նապօլէօնին), հայ է եղել Մուրադեան ազգանունով, որ Նապօլէօն երրորդի երեւելի զօրապետ Բալէն (որ նոյնպէս դաւաճանել է Ֆրանսիային), նոյնպէս հայ է եղել եւ նրա իսկական ազգանունը եղել է ոչ թէ Բաղէն (Բաղէ), այլ Բաբուշեան:

Սրանք հաստատապէս հայեր են եղել: Բայց կարծիք կայ, որ եւ շատ շուտով պիտի ստուգվի, որ եւ Սալըսթրի, անգլի-

ական այժմեան առաջին մինիստրը՝ հայ է ծագումով եւ նրա իսկական ազգանունն է Սարգսեան:

Իսկ թէ Բէսարէ իշխանը հայ է, դա արդէն հաստատապէս ապացուցուած է և նրա իսկական ազգանունն է՝ Փէս-ճար:

Ոմանք եւթադրութիւն են անուն որ և գեներալ Բալանձէ հայ է եւ նրա իսկական ազգանունն է Պեղոսեան, — բայց իմ կարծիքով այդ եւթադրութիւնը դեռ եւս ապացուցված չէ կարելի համարել:

Իսկ թէ բոլոր անցած եւ ժամանակակից երեւելի վրացիները Հայոց ծագում են ունեցել, եւ թէ գոչ նրանց բոլոր մայրերը հայուհիք են եղել, — այդ արդէն ապացուցված իրողութիւն է:

(ՄԱՍ)

ԿԱԼԶԻԻ ՄԻՋՈՏԱՌՊԱՆ ՓՈՇԻՆ
ԱՄԵՆԱԶԳՈՒ ԴԵՂ ՍԷ ՄԼԵԿՆԵ-
րու, Լուերու, Ոջիներու, Ճանճերու,
Մեղերու, Մրջիներու, Թրթուր-
ներու, Յօրենի որդերու և ին զէմ:
Քիչօն կը ծախուի 12 Փրանք. թղթ-
թատարութեան միջոցաւ, 100 կրամի
1.95 Փր. է: — Դիմելու է առ Է. ԿԱԼԶԻ,
71, Կուռ ա' Երրորդի, Լիոն:
Արեւելից համար ներկայացուցիչն է
Դեղագործական Միութեանց, Ղալա-
թիայ Մեծ Փողոց, 55, Կ. Պոլիս:
796 5-10

ՊԵԼՄԵՃԷ ԷԼԷ
ԱԳՏԸ ԻՉՏԻՎԱՃ
ՎԷ
ՊԻՐ ՍԷՐՎԷԹ

Այս գրքից կը ծախուի Կ. Պոլիս կա-
մուրջի գլուխ ջրալաճաւ Պօղոս և Յակոբ
աղաներուն խանութը և Լրագրալաճաւաց
քով, ի գին 2 դահեկանի:

Խեղճ ազգային մը, երկարատեւ
հիւանդութենէ մը վերջ՝ թէպէտեւ ա-
պաքինած՝ ալ ընդերկար պարապ մը-
նալով, զաւակօքը վերջին աստիճան
թշուառութեան դատապարտուած,
այս գրքովին հասօլթէն կը յուսալ
չնչին գրամագլուխ մը հայթաթել
գործ մը սկսելու նպատակաւ: Ուստի
կը խնդրուի ամեն աղքատասէր ազգա-
յիններէ՝ մէկ մէկ օրինակ գնել սոյն
աժան գրքէն, որ ամբողջ ընտանիք մը
փրկելու սահմանեալ է: 908 2-5

Ջերմապէս կը յանձնարարենք մեր ըն-
թերցողաց գործածել Հէնրի Միւսի Օջո-
րակն, բուժելու համար իրենց ջղային հի-
ւանդութիւնները, գլխու պոպոտները, քը-
նաւորութիւնները, ջղային ցնցումներն ևն:
Փոքրաքանակ կը վաճառուի ամեն դե-
ղատանց մէջ: Կեդրոնատեղին է Դեղա-
գործական Միութեանց, 55, Ղալաթիա
մեծ փողոց: 776

Պատասխանատու
Ս. ՏՄԱՍԵԱՆ
ՏՊԱԳՐ. ՍՐԵՆԵԼԻՔ ԵՆ ՄԱՆԻՍ ԼՐԱԳՐԱՅ